ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2016-8-1-Ա

ք. Երևան 19.10.2016թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2016 թվականի հոկտեմբերի 19-ի նիստում քննարկեց 2016 թվականի սեպտեմբերի 19-ին արտոնագրային հավատարմատար Սուսաննա Կնյազյանի կողմից ներկայացված՝ Մահարիշի Վեդիք Յունիվըրսիթի Լիմիթիդ ընկերության (36 Archbishop Street, VLT 1447 Valletta, Malta (MT), MT) բողոքը «ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏԱԼ ՄԵԴԻՏԱՑԻԱ» (հայտ No20150431) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի եւ ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու եւ քննարկելու» Կարգի 90-րդ կետի 3-րդ ենթակետի 4-րդ ենթակետի «դ» պարբերության համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առեւտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցան ժամանակը, տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ ապրանքների եւ (կամ) ծառայությունների այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ «Տրանսցենդենտալ Մեդիտացիա» բառակապակցությունը, որը հայտարկված նշանում հիմնական ընկալման տարր է, հանդիսանում է մեդիտացիայի հատուկ տեխնիկա, որը մշակվել է հայտնի հնդիկ գիտնական եւ մեծ ուսուցիչ՝ Մահարիշի Մահեշ Յոգիի կողմից եւ տարածում է ստացել ամբողջ աշխարհով, բնութագրում է ծառայության տեսակը՝ մատնանշելով

գործունեության այն ճյուղը, որին վերաբերվում է հայտարկվող նշանը: Մահարիշի Մահեշ Յոգիի կողմից ստեղծված տրանսցենդենտալ մեդիտացիայի հատուկ տեխնիկան տարիների ընթացքում դարձել է մեդիտացիայի տեսակներից մեկը, որը օգտագործվում է գրեթե բոլոր յոգա կենտրոններում եւ դպրոցներում, հետեւաբար չի կարող հանդիսանալ որեւէ մեկի մտավոր սեփականությունը: Ինչ վերաբերվում է հայտարկված ապրանքային նշանում ներառված ծառի պատկերին, ապա տվյալ դեպքում ծառի ընտրությունը պատահական չէ, քանի որ պատկերված է ոչ թե սովորական, այլ Կենաց ծառ, որն էլ դեռեւս վեդայական վկայություններում կապվում է տրանսցենդենտալ մեդիտացիայի հետ, որտեղ Տիեզերքի կառուցվածքը համեմատվում է ծառի, օվկյանոսի, ալիքների հետ, իսկ Կենաց ծառի արմատները խորհրդանշում են կյանքի աղբյուրը (http://www.studfiles.ru/preview/1740139/):

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ ներկայացված ապրանքային նշանի բառային մաս հանդիսացող «Տրանսցենդենտալ Մեդիտացիա» բառակապակցությունը հիմնական ընկալման տարր է և հանդիսանում է մեդիտացիայի հատուկ տեխնիկա, իսկ պատկերային մասում ներառված ծառի պատկերը ներկայացնում է Կենաց ծառը, որը նույնպես կապվում է տրանսցենդենտալ մեդիտացիայի հետ և երկու տարրերն էլ լայն տարածում են ստացել ամբողջ աշխարհում: Հետևաբար «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն փորձաքննության բաժնի կայացրած որոշումը իրավաչափ է եղել:

Բողոքարկողը ներկայացրեց իր փաստարկները բողոքը բավարարելու և ապրանքային նշանը գրանցելու համար:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Սուսաննա Կնյազյանի կողմից ներկայացված՝ «ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏԱԼ ՄԵԴԻՏԱՑԻԱ» (հայտ No20150431) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ